

**ԱՆԱԳԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ
ԿԻՐԱՎՈՍՅԱՆ**

**Երաժշտագետ, ֆոլկլորագետ,
Երևանի Կոմիտասի անվ. պետական
կոնսերվատորիայի դոցենտ**

Ժողովրդական գործիքադարանի ուսումնասիրության պարունությանը նվիրված որևէ աշխատություն մեզանում չկա, այդ իսկ մտահոգությամբ չեռնամուխ եղանք հայ երաժշտագիտության մեջ ժողովրդական նվագարանների և կատարողականության ուսումնասիրման բնագավառում այդ բացը հնարավորինս լրացնելու:

**Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ր Ղ Ա Կ Ա Ն
Գ Ո Ր Ծ Ի Ք Ա Ղ Ա Ր Ա Ն Ի Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Է Ջ Ե Ր**

ԱՌԱՋԱԲԱՆ

Երաժշտական գործիքագիտությունը գիտություն է երաժշտական գործիքների (նվագարանների) կառուցվածքի, չափնային (ակուստիկական) և արտահայտչական հատկանիշների ու դրանց դասակարգման մասին, ընդգրկելով նաև դրանց զարգացման պարունությունը:

Գործիքագիտությունն առնչվում է երաժշտական չափնագիտության*, գործիքաշինության, երաժշտագիտության և ազգագրության հետ: Որպես երաժշտագիտության ինքնուրույն ճյուղ ձևավորվել է XIX դարի 2-րդ կեսից:

Գործիքային կամ նվագարանային արվեստը հայ ժողովրդի կյանքի ու կենցաղի անբաժանելի մասն է: Ժողովրդական երգով ու նվագով, նաև ավանդական նվագարաններով ժողովուրդն արտացոլել է իր ներաշխարհն ու ազգային հոգեկերպվածքը, հայրենի բնությունն ու աշխարհային գործունեությունը, ծիսակենցաղային և կյանքի այլևայլ դրվագները, որով կարելի է գաղափար կազմել նաև արվեստի ժողովրդի մշակույթի և կենսամակարդակի մասին:

Ժողովրդական կենցաղում լայնորեն գործավոր, հիմնականում պարզ կառուցվածքի այն գործիքները, որոնց նվագի րեխնիկային փորձապարտերը հարույժ մասնագիտացված ուսուցում չի պահանջել հնում, կոչվել են ժողովրդական երաժշտական գոր-

ծիքներ: Դրանց սրեղծման ու զարգացման մեջ ներդրում ունեն աշխարհի բոլոր ժողովուրդները, այդ թվում և հայերը:

Ինչպես Հայաստանը շրջապատող արևելյան փարածաշրջանում, նույնպես և հայոց մեջ ժողովրդական նվագարանները հարուստ են ու բազմազան: Դրանց փարածվածության սահմանները որոշելու, զարգացման ընթացքի պարկերը սահմանելու համար մասնագետները դիմում են նախ մեր օրերում հնչող նվագարաններին և նվագարանային երաժշտությանը, ժողովրդական, գուսանական և աշուղական երգերին, ինչպես նաև հայ պարմիչների ժառանգությանը, մանրանկարչությանը, պարմական հուշարձաններին ու հնավայրերում պեղված գրածոներին, ժայռապարկերներին ու փայտաքարերին և այլն, այսինքն՝ այն ամենին, որպեղ կան հիշարկություններ և դրոշմանկարներ նվա-

զարանների ու նվագածուների մասին:

Կոմիտասը գրում է, որ «բոլոր ազգերն ալ՝ իբրև ազգային նվագարան մեկ գործիք մը միայն կունենան ընդհանրապես, իսկ մյուսները շինված կամ հարմարցված կըլլան անոր վրա: Հայոց մեջ այդ ազգային նվագարանը **փողն** է, որ պետք է խորունկ ազդեցություն գործե իր պարզության մեջ պարփակված վեհությամբ» (1. էջ 197):

Մեր համեստ կարծիքով, նաև նվագարանների ազգային պարկանելությունը սահմանվում է ժողովրդի երաժշտական կենցաղում դրանց խաղացած դերով և կարևորության աստիճանով: Նախևառաջ, նվագարանին հոգի ու զգացմունք հաղորդողը դրան փորձապարտ պարկեր կատարողն է: Կատարման վարկերությունն է ունկնդրին հիացնում արվեստի նվագարանի ինքնատիպ հնչողությամբ, րեխնիկային բազմազանությամբ, րեխնիկական այլևայլ հնարքներով, ինչու չէ՞ նաև ունկնդրի վրա թողած զգացմունքային ազդեցությամբ:

Ամեն մի ժողովուրդ սրեղծել է իր ինքնատիպ **գործիքադարանը**: Երաժշտական մշակույթի զարգացումը պայմանավորել է այդ գործիքադարանի աստիճանական զարգացումը, սակայն ժողովուրդների բազմադարյա մշակութային շփումները, փոխազդեցությունները, միգրացիան նպաստել են այն հանգամանքին, որ մի շարք նվագարաններ՝ էսկանորեն նույնը, սակայն աննշան փարբերություններով և փարբեր անուններով առկա են միևնույն փարածաշրջանի շարք ազգերի կենցաղում: Այս միտքը հաստատվում է նաև Կոմիտասի հետևյալ խոսքերով. «Ազգերու փոխադարձ ազդեցությունն անուրանալի և անհերքելի փաստ է, որովհետև անազդեցիկ մնացած ազգ չկա. յուրաքանչյուր ազգ, ինչ որ չունի, ունեցողներեն, պետք զգացած ժամանակ, փոխ

ԵՐԱԾՅՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ-ՄԵՆՍՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2016

* Գործիքագիտության բնագավառում, հատկապես գործիքաշինության մեջ, կիրառվում է ձայնագիտության ձայնի կամ հնչյունի մասին գիտության որոշ ֆիզիկական օրինակավորություններ: Հետազոտում է երաժշտական հնչյունը, համահնչյունները, երգչական ձայնը և նվագարանները:

կառնե և կազգայնացնե»(1. էջ 48):

Մարդկության պայմանության ընթացքում նվազարանների սրեղծման հերթականությունը հետևյալն է. սկզբում առաջացել են ռիթմեր արտաբերող **հարվածայինները** (ի դեպ՝ այսօր էլ դեռ շարագներ պարում են միայն քմբուկի կամ շեռքի ափա-հարվածների ռիթմերի տակ), այնուհետև՝ անասնապահության մեջ և կենցաղում օգտագործվող **փողայինները** և վերջապես, հնում՝ պալապական, այսօր՝ քաղաքային միջավայրում, առավել մասնագիտական մակարդակի վրա գրավող և կառուցվածքով բարդ **լարայինները**:

Հայոց մեջ մեծ տարածում են գրել հիմնականում հետևյալ նվազարանները.

Փողային

1. Սնամեջ – սրնգային - շվի, թութակ, սրինգ կամ բլուլ

2. Լեզվակային (կամ մունդչրուկային)- դուդուկ, գուռնա, պկու, պարկապզուկ

Լարային

1. Կամիթային – թառ, սագ, ուղ, քանոն, բաս-քանոն (XXI դար), քնար

2. Աղեղնային – քյամանչա, քյամանի

3. Բազմալար-հարվածային – սանթուր

Հարվածային

1.Թմբուկային կամ մեմբրանային – դիոլ, դափ, նաղարա:

Առկա աղբյուրների համաչափ, նվազարանների այս երեք հիմնական տիպային խմբերը լայնորեն կիրառվել են դեռևս հեթանոս հայերի երաժշտական կենցաղում, հետագայում ունենալով զարգացման տարբեր աստիճաններ՝ եկեղ-հասել են մինչև մեր օրերը, ամրագրվել ժողովրդի կյանքի ամենատարբեր շերտերում՝ գյուղական և քաղաքային կենցաղից (ժողովրդածիսական արարողություններ) մինչև բարձր մասնագիտական բեմ (համերգներ, մրցույթներ, փառատներ):

Հնում երաժշտական գործիքները պատրաստվում էին բույսերի հասար ցողուններից, եղեգնից, կենդանու կաշվից, եղջյուրից: Երբեմն գործիքները զարդարում էին փղոսկրով: Լարերը պատրաստվում էին բուսական թելերից և կենդանու աղիքներից: Այդ ժամանակներից գրեթե ոչ մի գործիք չի պահպանվել, բայց դրանց մասին որոշակի գաղափար կարելի է կազմել հնագիտական պեղումների արդյունքների հետազոտություններից: Ավելի ուշ ժամանակներում նվազարաններ պատրաստելու համար օգտագործվել են բազմաբանակ նյութեր՝ ոսկոր, կալ, քար, մետաղ, փայտ (տարբեր ծառերից՝ ծիրանի, թթենի, տանձենի, ընկուզենի, ուռենի, սոճի, թղիլի և այլն), կաշի, մորթի, աղիք (կենդանու), մազ (չիու), մեր օրերում՝ արհեստական պլաստիկ նյութեր: Հաճախ, նվազարանները զարդարում են սաղափով կամ ոսկյա թիթեղներով:

Ժամանակի ընթացքում կատարելագործման ու նորերի սրեղծման ճանապարհով գործիքադարանն էլ ավելի է հարստացել:

Հայաստանում տարածված ու սիրված երաժշտական նվազարանների ուսումնասիրության բնա-

զավառում հայ երաժշտագիտությունը բավական հաջողություններ է գրանցել: Թեև կոնկրետ գործիքագետ-մասնագետների պակասն ակնհայտ է, այնուամենայնիվ, բնագավառը բավականաչափ ուսումնասիրվել է և նույնիսկ՝ տարբեր ճյուղերով՝ գիտական, հնագիտական, ընդհանուր երաժշտագիտական, էթնոերաժշտագիտական, բանաստեղծական, կատարողական, լեզվաբանական, շեռագրային (միջնադարյան մանրանկարչություն) նյութերի հիման վրա թեկնածուական թեզեր, դիպլոմային աշխատանքներ են պաշտպանվել, վերակառուցման միջոցով գործիքների վերափոխումներ կատարվել, հանրագիտարանային հոդվածներ, բանարաններ սրեղծվել:

ՄԱՍ 1

Գործիքագիտության և գործիքաշինության բնագավառում հատուկ ուշադրության է արժանի XX դարակազմի բազմակողմանի գործունեություն ծավալած երաժիշտ, կոմպոզիտոր Վարդան Գեորգի Բունին (Բունիաթյան, 1888-1960): Թեև նրա մասին գրքեր են տարբեր հոդվածներ մատուցում, երաժշտագիտական գրքերում, հանրագիտարանում, այնուամենայնիվ, նրա վաստակն արժանի է ավելիին, քան է:

Հիշենք նրա կատարած բազմաբանակ գործերից, թերևս, ամենանշանակալին՝ «Արևելյան սիմֆոնիկ նվագախմբի» սրեղծումը (1926) և հատուկ այդ նվագախմբի համար վերակառուցված նվագարանների ընդհանրությունը (ընդհանր՝ նշանակում է միևնույն նվագարանի տարբեր չափեր, չայնածավալ և տեմբր ունեցող գործիքների (բաս, տենոր, ալտ, սոպրանո, պիկոլո) խումբը): Գիտական լուրջ չափագրումների, ակուստիկական օրենքների հիման վրա Վ. Բունին վերակառուցման ենթարկեց թառը, քամանչան, սագը, դուդուկը (բաս դուդուկը կոչվում է բունի.թոն), շվին, սրինգը, գուռնան, քանոնը և սրեղծեց այդ գործիքների ընդհանրությունը՝ այդ ճանապարհով չգրելով ժողովրդական գործիքների նվագախմբի հնչողությունը հասցնել սիմֆոնիկ նվագախմբին հատուկ հզոր և բանկչ հնչողության: Նաև նպատակ կար բազմաչափ և կոմպոզիտորական սրեղծագործություններով հարստացնել արևելյան անսամբլի նվագացանկը: 1926 թվականին կայացավ Արևելյան սիմֆոնիկ նվագախմբի առաջին ցուցադրական համերգը: Այսպիսով, Վ. Բունին դարձավ Կովկասում արևելյան նվագախմբի գործիքային դիսպոզիցիոն ընդլայնման գաղափարի առաջին իրականացնողը: Վ. Բունու վերակառուցած գործիքների մեծ մասը պահվում են Մոսկվայի Գլխավոր անվան երաժշտության և արվեստի պետական թանգարանում: Նրա գործը հետագայում տարածվեց Ուզբեկստանում, Տաջիկստանում, ապա՝ Ղազախստանում: Ըստ արխիվային փաստաթղթերի. «1940 թվականին, նա գործիքների ամբողջական ընտանիքներ է հանձնել Տաջիկստանի պետական ֆիլհարմոնիային, այնուհետև՝ Մոսկվայում արվեստի և գրականության տասնօրյակին Տաջիկստանի ժողովրդական գործիքների անսամբլը հանդես է եկել Բունու վերակա-

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 1(54)2016

Գործիքագիտություն (Ժողովրդական)

նուցած գործիքներով»: Ըստ մեկ այլ փաստաթղթի՝ «1957 թվականին, Դադստանի Երգի-պարի անսամբլի համար Բունին վերակառուցել է ազգային 29 գործիք: Դադստանի հանրապետության կողմից նա ստացել է տարբեր տեսքերի գործիքների մասսայական արտադրության առաջարկ» (2. էջ 99-100):

Այսպիսով կաստում և նրա սահմաններից դուրս հայրենի վիրտուոզ քամանչահար, արևելյան երաժշտության րեասթան, դիրիժոր, սրեդազործող, մանկավարժ, երաժշտահասարակական գործիչ Սաշա Օզանեզաշվիլին (Ալեքսանդր Արշակի Օհանյան (կամ Հովհաննիսյան), 1889-1932) իր բուն սրեդազործական կյանքում աչքաթող չի արել իր սիրելի նվագարանի՝ քամանչայի կատարելագործման հեռանկարը՝ 1909 թվականին քամանչայի պարմության մեջ նա առաջին անգամ ավելացրել է 4-րդ լարը: Մինչև այդ, մանրագնին խորանայով մուղամների կատարման առանձնահատկությունների և արքահայրչամիջոցների մեջ, նա հանգել է այն հասարակ եզրահանգմանը, ըստ որի քամանչայի ունեցած 3 լարերը ի վիճակի չեն ամբողջությամբ վերարտադրելու մուղամների հարուստ և գունեղ երաժշտական պատարառը, կրելու պահանջվող րեհեմիկական հագեցվածությունը և վերջապես, լայն համերգային ասպարեզ դուրս գալու առումով այն չէր կարող ունենալ զարգացման հեռանկար:

Արդյունքում, չորրորդ լարի ավելացման շնորհիվ, Օզանեզաշվիլին՝ ընդլայնելով գործիքի հնչյունաձայնային, լայն դուռ է բացում նվագարանի րեհեմիկական հնարավորությունների առջև, սրանում նոր երանգներ՝ դրանով իսկ մեծացնում նվագարանի մեկնակատարային նշանակությունը: Այս նորարարությունն, անշուշտ, պայմանավորված էր Ա. Օզանեզաշվիլու մեծ րադանդով, վիրտուոզ նվագի կարողություններով, որպիսին մինչև այդ չէր ունեցել Արևելքի որևէ այլ քամանչահար երաժիշտ-կատարող:

Բնագավառի նվիրյալ անունների շարքում հարկ է առանձնացնել երաժշտագետ-ֆոլկլորագետ, կոմպոզիտոր, երաժշտահասարակական գործիչ Արամ Կարապետի Բոչարյանին (1903-1977). միայն այն հանգամանքը, որ նրա գործունեությանը հիմնադրվել է ԳԱԱ Արվեստի ինստիտուտը, բավական կլիներ նրա անունը հավերժացնելու համար, սակայն Ա. Բոչարյանն իր ամբողջ սրեդազործական ներուժը դրեց ի նպաստ հայ երաժշտագիտության բազմակողմանի զարգացմանը: Ա. Բոչարյանի ներդրումը գործիքագիտության մեջ հսկայական է, նրա կատարած աշխատանքները լայնածավալ են և ընդգրկում: Ա. Բոչարյանի աշխատություններ (3.) գործիքագիտության բնագավառում բավականաչափ ուսումնասիրվել են ԳԱԱ Արվեստի ինստիտուտի երաժշտագետների կողմից (Կ. Խուդաբաշյան, Հ. Պիկիչյան, Ժ. Մեհրաբյան, Մ. Սարգսյան, Ա. Բաղդասարյան և ուրիշներ) (4.):

Ինչու, գործիքագիտությանը նվիրված Հ. Պիկիչյանի հոդվածը մանրակրկիտ ներկայացնում և վերլուծում է Ա. Բոչարյանի երկար րարիների պրպրումները՝ նվիրված փողային և հարվածային

(ըստ Կոմիտասի և Ա. Բոչարյանի՝ հարկանային) նվագարանների ուսումնասիրությանը (5. էջ 21-27): Էթնոերաժշտագետ Հ. Պիկիչյանը գրում է. «...Հայոց ավանդական նվագարաններին նվիրված համապարփակ ուսումնասիրություն մինչև օրս չի հրատարակվել, թեև առանձին նվագարաններին ու դրանց ընտանիքներին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ են տպագրվել նաև մեր օրերում... Ա. Բոչարյանի ուսումնասիրությունն իր տեսակի մեջ մինչև օրս գերազանցված չէ: Նախաբանից և հեղինակի ձայնադարանային ֆոնդի հավաքածուից կարելի է ենթադրել, որ Բոչարյանը նպատակադրվել էր շարունակել ուսումնասիրությունը նաև Հայաստանում տարածված լարային ընտանիքի նվագարանների առումով, որի մասին ցավոք որևէ այլ փաստ չունենք» (6. էջ 8):

Հարկ է հիշարակել հայագի երաժիշտ Աշոտ Բովանի (Հովհաննեսի) Պետրոսյանցին (1910-1978 թթ.) երաժշտագետ, նվագախմբի դիրիժոր, գիրմանական, երաժշտահասարակական գործիչ, մանկավարժ, խորհրդային գործիքագիտության հիմնադիրներից մեկը: Նրան իրավամբ կարելի է համարել Վ. Բունիի անմիջական հետևորդը, որը հիմնականում ապրել և գործունեություն է ծավալել Միջին Ասիայում (հայրկապես՝ Ուզբեկստանում): Ծնվել է Թուրքմենստանի Մարի քաղաքում, իսկ 1928 թվականին րեդափոխվել է Ուզբեկստան (Տաշքենդ): Նվագարանների կատարելագործման ուղղությամբ րարված աշխատանքների շնորհիվ նա սրեդեղ է ուզբեկական նոր րեսակի նվագախումբ: Աշոտ Պետրոսյանցն իրեն ամբողջովին նվիրել է ուզբեկական ժողովրդական գործիքադարանի կատարելագործման րեսակի և գործնական իրենդիրներին (7. էջ 58-62): Ի դեպ, երաժիշտ-գործիքագետ Կառլեն Միրզոյանն իրեն համարում է Պետրոսյանցի աշակերտն ու հետևորդը:

1970-1980-ականներին այդ ուղղությամբ մեծ աշխատանք է րարել նաև ՀՀ վաստակավոր արտիստ, քամանչահար և նվագարանագործ վարպետ Մարտին Մարգարի Խաչատրյանը (1923-1992 թթ.): Նրա սրեդած բազմաթիվ գործիքների շարքում (րավիդ), րեսնում ենք նաև «Բամբուր» պայմանական անունը կրող լարային-ադեղնային նվագարանը, որը նախարեկված է նվագախմբում բասային ֆունկցիա կատարելու համար:

Դուրուկի վերակառուցման գործնական քայլեր է կատարել անվանի դուրուկահար և մանկավարժ Գեորգի Վարդանի Մինասովը (1933 թ.), որը Բաքվից Հայաստան րեդափոխվելով, 1983 թվականից աշխատել է Հայաստանի Ժողովրդագուսանական երգի պետական անսամբլում (գեդ. դեկ.՝ Ռուբեն Ալթունյան) որպես դուրուկահար: Տիրապետում է մուղամաթի արվեստին: Չուգահեռաբար զբաղվում է մանկավարժությամբ: Հեղինակ է դուրուկի չեռնարկի, որը մեծ պահանջարկ ունի մասնագետների և երաժիշտ-դուրուկահարների շրջանում: Վերջին րարիներին նա ակտիվ զբաղվում է դուրուկի րարբեր րեսակների վերակառուցմամբ ու սրեդմամբ: Ներկայումս դեկավարում է իր սրեդած «Դուրուկա-

Երաժշտական ԳԱՅԱՍՍԱՆ 1(54)2018

հարևների հեզայակը», որտեղ փարբեր դուդուկների (ալյու, փենոն, բաս-բարիտոն) միջոցով կարարվում են բազմաաչյան, պոլիֆոնիկ սրեղծագործություններ, հոգևոր մեղեդիներ, կոմպոզիտորական սրեղծագործություններ, փարբեր մշակումներ:

XXI դարում, անվանի երաժիշտ Արա Գևորգյանի մրահղացմամբ, վարպետ Ալբերտ Արմենակի Չաքարյանը (1939 թ.) 2013 թվականին պարբերաբար է բաս-բասոնոն լարային նվագարանը*, որը լիարժեքորեն կարող է փոխարինել բասային ֆունկցիա կարարող՝ նախկինում օգտագործվող ժողովրդական և եվրոպական դասական գործիքներին (ուդ, դոմբրա, թալչուբակ, կոնյուրաբաս և այլն): Առաջին բաս-բասոնը, որի անունն է «Ալվարդ», հերազայում պետք է պահվի Հայաստանի Պարմության քանդարանում, որպես նվագարանի սրեղծման անձիարեյի փաստ. նախ, որ աշխարհում դրա նախապիպը չկա և ամենակարևորը՝ ծննդավայրը Հայաստանն է:

Հայ ժողովրդական նվագարանների ծագումնաբանական հարցերով զբաղվող գիտնական, պրոֆեսորնալ երաժիշտ-շեփոհար Էդուարդ Անդրանիկի Բարսեղյանը (1945 թ.), հայկական մանրանկարներից քաղած պարկերների հիմքով 1980-ականներին վերասրեղծել է շնչական (փողային) նվագարան՝ անվանելով «Փող»**: Կոնկրետ այս անվամբ ներկայումս հայկական կենցաղում փողային նվագարան չկա: Բարսեղյանի «փողը» ունի իր փարպետակները՝ փողակ (փոքր փող) և սրվարափող «մեծ փող»: Իր տվյալներով, չայնարարներումս փոխանակյալով գործիքը մոտ է շեփորի կամ նման մի նվագարանի, որն օգտագործել են վաղ անցյալի գուսանները: Փողի փենբըրը բնորոշվում է իբրև թավշյա, փափուկ: Է. Բարսեղյանը ներկայումս շարունակում է ուսումնասիրությունները նվագարանների ծագումնաբանության բնագավառում, իր աշխատանքում ընդգրկելով աշխարհի փարբեր թանգարաններում պահվող հնագույն նմուշներ (8.):

Աշխատանքներ են տարվում նաև հայկական քնարի, Սեբաստիայի սանթուրի և համշենական քամանիի վերականգնման ուղղությամբ և, արդեն իսկ, շրջանառության մեջ են առաջին նմուշները:

Ծ Ա Ն Ո Ւ Պ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Կոմիտաս, Հովվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941 թ.: էջ՝ 197: Komitas, Hodvatsner ev usumnasirutyunner, Yer., 1941 t.
2. Բրուտյան Մ. Ա., Հայ քաղաքային ժողովրդական երաժշտության կատարողական արվեստի պատմության էջեր, Երզ, 2001 թ.: Brutyan M. A., Hay qaghagayin zhoghovrdakan erazhshtutyanyan kataroghakan arvesti

* Նվագարանի հեղինակային բոլոր իրավունքները միջազգային օրենքներով պաշտպանված են 2013-ին այն գրանցվել է «Գյուտերի և մտավոր սեփականության պահպանման կենտրոնում»:

** Նախկինում բոլոր փչովի գործիքները կոչվում էին «փող», իրարից տարբերվելով միայն հումքով (օր.՝ եղեգնափող, եղջերափող, ծիրանափող և այլն):

- patmutyan eger, Yerg, 2001 t.
3. Կոչարյան Ա., Армянская народная музыка., М., 1939. Kocharyan A., Armiyanskaya narodnaya muzyka., М., 1939.
 - Քոչարյան Ա., Միափող սրինգ: ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտությունների, Եր., 1962, թիվ 11: Qocharyan A., Miapogh sring., HSSH GA Teghekagir hasarakakan gitutyunneri., Yer., 1962 t., tiv 11.
 - Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում. փողային խումբ: Պատմա-բանասիրական հանդես, 1963, թիվ 3: Qocharyan A., Yerazhshtakan gortsiqnere Hayastanum. Poghayin khumb. Patmabanasirakan handes, 1963, tiv 3.
 - Կոչարյան Ա., Ударные и духовые народные музыкальные инструменты в Армении (Автореферат диссертации), Ер., 1965. Kocharyan A., Udarnye i dukhovye narodnye instrumenty v Armenii (Avtoreferat dissertatzii), Yer., 1965.
 - Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում: //Գիտություն և տեխնիկա, թիվ 1, 1970, էջ՝ 8-11: Qocharyan A., Yerazhshtakan gortsiqnere Hayastanum. Gitutyun ev tekhnika, tiv 1., 1970.
 - Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում: Գիտություն և տեխնիկա, թիվ 2, 1970, էջ՝ 51-54 խմբության հրատարակումը՝ ձեռագրերի հիման վրա: Qocharyan A., Yerazhshtakan gortsiqnere Hayastanum. Gitutyun ev tekhnika, tiv 2., 1970.
 4. /Արամ Քոչարյան. Ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2004: /Aram Qocharyan. tsnndyan 100-amyakin nvirvats gitazhoghovi nyuter. Yer., 2004.
 5. Պիկիչյան Հ., Հայ ազնվական նվագարաններին նվիրված Արամ Քոչարյանի ուսումնասիրությունները, /Արամ Քոչարյան. Ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր., 2004: Pikichyan H., Hay avandakan nvagarannerin nvirvats Aram Qocharyani usumnasirutyunnere., /Aram Qocharyan. tsnndyan 100-amyakin nvirvats gitazhoghovi nyuter. Yer., 2004.
 6. Քոչարյան Ա., Երաժշտական գործիքները Հայաստանում, Եր., 2008 թ.: Qocharyan A., Yerazhshtakan gortsiqnere Hayastanum. Yer., 2008 t.
 7. Լուրջուկյան Ա., Ուզբեկական ժողովրդական երաժշտական գործիքների կատարողականության պատմություն, Տաշքենտ, 2009 թ.: Lutfulaev A., Uzbekakan zhoghovrdakan yerazhshtakan gortsiqnere kataroghakanutyanyan patmutyuy, Tashqent, 2009 t.
 8. Բարսեղյան Է. Ա., Հայ հնագույն մուսիկ պրոնգե արձանիկը Լուվրի թանգարանում: Յառաջ (Ֆրանսիա), յունուար 5, 1992 թ.: Barsehgyan E. A., Hay hnaguyun nuagi pronze ardzagange Luvri tangaranum. Yaraj (Fransia), yunuar 5 1992 t.

(Շարունակելի)

Բանալի-բաներ. Գործիքադարան, ժողովրդական նվագարաններ, վերակառուցված նվագարանների բնույթը, նվագարանների երեք հիմնական տիպային խմբեր՝ փողային, լարային, հարվածային, գործիքագիտություն, գործիքաշինություն, նվագարանագործ վարպետ:

Ключевые слова: народные инструменты, реставрированные семейства инструментов, три основные типовые группы: духовые, струнные, ударные, изготовление музыкальных инструментов, мастер музыкальных инструментов.

Keywords: national instruments, restored families of musical instruments, three main type of groups: wind, string, percussion, production of musical instruments, master of musical instruments.

Տեղեկություններ հեղինակի մասին. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԳԻ, (ծ. 1953, Երևան) Երաժշտագետ, ֆոլկլորագետ, ԵՊԿ դոցենտ, ավարտել է Երևանի Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցի դաշնամուրի բաժինը, Ռ-Մեյիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի և Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտական բաժինները: Աշխատում է կոնսերվատորիայի ֆոլկլորագիտության ամբիոնում, որոշեմտի պաշտոնում, դասավանդում՝ «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն», Կատարողական արվեստ, Մասնագիտական (ֆոլկլորագիտական) դասարան է վարում: Հեղինակ է գրքերի՝ «Իրանի Սպահանի շրջանի Փերիա գավառի ժողովրդական և աշտոպական երգերի ընտրանի» (ձայնագրյալ ժողովածու), «Դրագարի» հրատ., Փասադենա (ԱՄՆ), 1996-69 էջ: «Հովհաննես Դարբինյան – Խմբավարն ու բառահարը», Եր., Ամրոց., 2000 թ., -55 էջ: «Մարգարիտ Բրտյան – Կենսամատենագրություն», Եր., Ամրոց գրուպ, 2007 թ., -71 էջ: «Հայ դուդուկահարներ», «Գ-ուղուկը», Եր. 2007, էջեր՝ 25-59: «Արգաս Ոսկանյան – Մանկավարժը և հայ երգեցողության դպրոցը», Եր., Անահիտ 2008 թ., - 117 էջ: «Հայկական ժողովրդական նվագարաններ» (համահեղինակ՝ Ա. Բաղդասարյան), Եր., Կոմիտաս, 2008 թ., (հայերեն, ռուսերեն, անգլերեն) էջեր՝ 36-76: «Հայ ժողովրդական նվագարանային կատարողական արվեստ», ձեռնարկ, Եր., Ամրոց-Գրուպ, 2011 թ., -248 էջ: *Народная музыка и инструменты (соавторы: К. Худобабян, А. Багдасарян). В книге "Армяне" (из серии "Народы и культуры).* Москва, "Наука", 2012, стр. 419-437. *Ֆոլկլորագիտության հարցերին, գործիքագիտությանը, աշտոպագիտությանը նվիրված, գրախոսական, վերլուծական, մատենագիտական, գիտական թեզերի և այլ բնույթի երկու տասնյակից ավելի հոդվածների հեղինակ է, որոնք հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում և անսագրերում /«Կուլտուր-լուսավորական աշխատանք», «Իրան Նամե», «Երաժշտական Հայաստան», «Հայացք Գլոբալ»/: Բուկլետների, անտագիանների հեղինակ է, ունի երեք տասնյակից ավելի հոդվածներ մանրում, որոնք անդրադարձ են Հայաստանի երաժշտական ժառանգությանը այս կամ այն իրադարձությանը և անվանի, երբեմն էլ՝ մոռացված արվեստագետներին:*

Сведения об авторе: КИРАКОСЯН АНАИТ АРТАВАЗДОВНА (род. в 1953 г., Ереван, Армения) - музыковед-фольклорист. Училась в Музыкальной школе им. Саят-Нова по классу фортепиано, Музыкальном училище им. Р. Меликяна по специальности музыковедение, Ереванской государственной консерватории им. Комитаса (музыковед-фольклорист). Работает на кафедре армянской музыкальной фольклористики Ереванской государственной им. Комитаса в должности доцента. Преподаёт следующие дисциплины: Армянское народное музыкальное творчество, Исполнительское искусство, Специальный класс "Музыкальная фольклористика". Автор книг: /"Народные и ашугские песни Периа Исфahanского района Ирана" (Персиа). Пасадена, США, 1996, - 69 с.; "Ованес Дарбинян - хормейстер и тарист", Ер., 2000, - 54 с.; "Маргарит Брутян - Материалы к био-библиографии", Ер., 2007, - 71 с.; "Армянские дудукисты" (см. Альбом "Дудук"), Ер., 2007, С. 25-59; "Арзас Восканян - педагог и армянская вокально-исполнительская школа", Ер., 2008, - 114 с.; "Армянские народные музыкальные инструменты" (соавтор А. Багдасарян), Ер., 2008 (на арм, русск. и англ. языках), С. 36-760; "Армянское народное инструментальное исполнительское искусство", Ер., 2011, - 247 с.; *Народная музыка и инструменты (соавторы: К.Худобабян, А. Багдасарян), в книге "Армяне" (из серии "Народы и культуры), М.: Наука, 2012, С. 419-437. Является автором около двух десятков статей, посвященных вопросам фольклористики, музыкального инструментария, ашугской музыки; рецензий, аналитических, биографических, библиографических материалов, изданных в разных научных журналах, а также тезисов и многочисленных газетных статей, посвященных разным, порой неизвестным или забытым музыкантам.*

Information about the author: KIRAKOSYAN ANAHIT ARTAVAZD (born 1953, Yerevan) Musicologist, scholar of folklore, docent of YSC, graduated from the piano department of musical school after Sayat Nova in Yerevan, musicological departments of musical collage after R. Meliqyan and YSC. Working in the folklore chair of conservatory with the position docent, teaching the Armenian folk music, performing arts, taught the professional (folklore) class. Author of books "The selection of folk and ashugh songs in the Iran's Isfahan's province Feria" (recorded digest), "Drazark" pub. Pasadena (USA), 1996, - 69 P., "Hovhannes Darbinyan - conductors and tar player", Yerevan, Castle, 2000, - 55 P., "Margarit Brutyanyan - Bibliography" Yerevan, Castle group, 2007, - 71 P., "Armenian duduk players", "Duduk", Yer., 2007, P. 25-59, "Arzas Voskanyan - Pedagogy and school of Armenian singing", Yer., Anahit 2008, - 117 P., "Armenian folk instruments"(co-author A. Baghdasaryan), Yer., Komitas, 2008 (in Armenian, Russian and English), P. 36-76, "Armenian folk instrumental performing arts", manual Yer., Castle Group, dated, 2011, P. 248. Folk music and tools (co-authors: K. Khudobashyan, A. Baghdasaryan), In the book "Armenians" (from a series "The people and cultures), Moscow, "Science", 2012, P. 419-437. The author of analytical, bibliographic, scientific papers and other types of more than two dozen articles dedicated to folklore issues, instrument and ashugh sciences published in various scientific journals. "Cultural-educational work", "Iran Name", "Musical Armenia", "Gyumry's sight". The author of booklets, annotations and has more than thirty articles in press, which referred to the musical culture of this or that event in Armenia and famous, sometimes forgotten artists.

Րեզյումե

Музыковед, доцент ЕГК Анаит Артаваздовна Киракосян — «Страницы истории армянского народного инструментария».

В нашей действительности нет труда, посвященного изучению армянского народного инструментария. Автор дополняет это упущение и представляет инструментоведение как науку, возникшую у нас во второй половине XIX века. Ею изучены истоки, начиная со Средневековья по материалам историков V века, археологических раскопок, надгробных камней и т.д.

Дается анализ взаимодействия национального инструментария, описание трех основных групп инструментов: духовых (свирелевые, мундштуковые), струнных (щипковые, смычковые, ударно-многострунные), ударных (барабанные или мембранные). С течением времени инструментарий обогатился современными инструментами; создаются новые и ведутся реставрационные работы по аналогам древних экземпляров. На основании этих материалов написаны научные труды и статьи, кандидатские работы, статьи в энциклопедических словарях. Назовем яркие имена армянских музыкантов-мастеров: Варган Геворкович Бунни (Бунниатян), Саша Оганезашвили (Александр Аршакович Оганян или Оганнисян), Арам Карпетович Кочарян, Ашот Иванович (Оганесович) Петросянц, Мартын Саркисович Хачатрян, Георгий Варганович Минасов, Альберт Арменакович Закарян, Эдуард Андраникович Барсебян и др.

Summary

Musicologist, Docent of YSC Anahit Artavazd Kirakosyan - "Pages of history of the Armenian national tools".

In our reality there is no work devoted to the study of the Armenian national tools. The author supplements this omission and represents an instrumentation as the science which has arisen in the second half of the 19th century. She has studied the origins of the sources of the Middle Ages on materials of historians of the 5th century, archeological excavations, tombstones, etc. The analysis of interaction of national tools, the description of three main groups of tools is given: wind instruments, string, percussions. During the time tools were enriched with modern tools; new tools are created and restoration works on analogs of ancient copies are conducted. Based on these materials scientific works and articles, candidate works, articles in encyclopedic dictionaries are written. We will tell the bright names of the Armenian musicians masters: Vardan Gevorg Buni (Buniatyan), Sasha Oganeczashvili (Alexander Arshak Ohanyan or Hovhannisyan), Aram Karapet Kocharyan, Ashot Ivan (Hovhannes) Petrosyants, Martin Sargis Khachatryan, Georgy Vardan Minasov, Albert Armenak Zaqaryan, Eduard Andranik Barsegyan, etc.